

ցանք անելու հետեւալ նկատողութիւնը, որը այնու ամենայնիւ կարեւոր ենք համարում անել:

«Արձագանք» վարդապետը գրողները այժմ Ստեփաննոս Նազարեանի օգնութեանն են դիմում, իբրեւ թէ հաստատելու, որ «Մշակը» աղաւաղում է հայոց նոր լեզուն: Ինչպէս նրա մէջն է, որ 1876 թւին Նազարեան գրել է մի յօդուած (որը մինչև այս տարի անտիպ է եղել մնացած), որի մէջ, ի միջի այլոց, այն միտքն է յայտնուած, թէ հայոց աշխարհաբար լեզուի մշակման համար մեծ նշանակութիւն ունեն գրաբարը և նոր բարբառները, որ ժամանակակից մատենագրութիւնը շատ օտարաբանութիւններ է ներթափանցում, և որ վերջապէս ոչ թէ միայն «Մշակը», այլ «Մեղրուի» և միւս բոլոր օրգանների լեզուն (լաւ կարգացէ՛ք) հեռու են հայոց լեզուի ոգուց և ներթափանցում են օտարաբանութիւնների:

Եթա, ցանկալի է իմանալ արդեօք «Արձագանք» թերթում գրողները իրանք տեսնակ են հայոց գրաբարին և դասական բարբառներին, որ ծիծաղելի յանդուգնութեամբ կրկնում են, թէ առանց գրաբարի՝ անկարելի է մշակել աշխարհաբարը: Արդեօք ինչն է. Գովհաննիսեան և իւր համանման աշխատակիցները երկու խօսք գիտեն գրաբարից և այժման բարբառներից, որ թող փչելով միամիտները աչքին, թուժակի նման կրկնում են անգիր արած ֆրազները:

Երկրորդ վաղուց է արդեօք որ «Արձագանք» կուսակցութեան կարծիքը փոխվել է Նազարեանի հայկաբանութեան և ավտօրիտէտ լինելու մասին: Ստեփաննոս Նազարեանի չունեն, իսկ կրթութեամբ մարդիկ լաւ ստալիստութիւն անել էլ չը գիտեն: Մենք, ի հարկէ, պ. Գովհաննիսեանի նման արիւն-վարիտալ պաշտօն չենք կարող կատարել, անպատուութիւն էլ ենք համարում, ապա թէ ոչ կը վերցնէինք «Փորձի» համարները, կը դնէինք պ. Գովհաննիսեանի քիթի տակ, և կասէինք նրան՝ «Կարգացէ՛ք, պարոն, և յիշեցէ՛ք այն, ինչ որ ասել էք 1879 թւին, այսինքն Նազարեանի յօդուածի գրեւոր երեք տարի յետոյ»: «Փորձի» մէջ պ. Գովհաննիսեան և ընկ. Նազարեանին, երբ նշանաւոր դործիչը դեռ նոր էր մեռել, և ինչպէս ասում են, դեռ բուրում էր նրա գերեզմանի վրա ծխած խոտիկի հոտը, ցեխը կոխեցին, միտեցին, չինեցին համբալ, բանազող... և այժմ, երբ իրանց ձեռնտու է, դիմում են նրա օգնութեանը, նրան երկինք են բարձրացնում, իբրեւ հայագէտ և լեզուի մէջ ավտօրիտետ:

«Փորձի» մէջ այդ պարոնները աշխատում էին ցոյց տալ, որ Նազարեան չը գիտէր գրաբար, ծանօթ չէր այժման բարբառներին, աշխատում էին ցոյց տալ, որ Նազարեան այնքան տղէտ էր, որ մինչև անգամ ուսուցիչից բառեր գողանալով, չէր էլ կարողանում բառերը թարգմանել:

և նրա հայագիտութիւնը շատ կասկածելի էր: «Փորձի» մէջ այդ մարդիկ աշխատում էին ցոյց տալ, որ Նազարեան մտածում էր օտար լեզուներով, և միայն հայերէն բառերով գրում, որ օտարաբանութիւններ էր անում, իսկ այժմ մոռանալով այդ բոլորը, մոռանալով նրա վրա թափած ամբողջ կեղտը, Նազարեանի օգնութեանն են դիմում իրանց անհեթեթութիւնները ծածկելու համար:

Մենք ընթերցող հասարակութեանն ենք թողնում յիշել այն կեղտոտ և քստմեղի տողերը, որոնք հրատարակեցան «Փորձի» մէջ Նազարեանի մասին, այլ և այն տողերը, որոնք այժմ են գրվում «Արձագանք» էջերում, այն էլ մի համարում գովաւանական, իսկ միւս համարում կեղտոտ ստուեր գրող:

Մենք բաւականա՞նք միայն հարցնելով, այդ ինչպէս եղաւ, որ նոյն Նազարեան, որը այնքան տղէտ էր պ. Գովհաննիսեանի և ընկ. կարծիքով հայոց լեզուից, որ չը գիտէր գրաբար, ծանօթ չէր աշխարհիկ բարբառներին և որ անվերջապէս օտարաբանութիւններ էր ներթափանցում, յանկարծ դարձաւ երևելի գրաբարագէտ, երևելի հայկաբան, ծանօթ բարբառներին և մի անմատչելի ավտօրիտետ հայոց լեզուի մշակման հարցում: Միթէ դա աշխատակալութիւն չէ. բայց այդ աշխատակալութիւնը թողնում ենք հասարակութեան պարզելու: Թէ ինչպէս է առաջ դալիս Ստեփաննոս Նազարեանի այդ տեսակ կարծիքը հայոց ժամանակակից մատենագրութեան և օրագրութեան լեզուի մասին, և թէ ինչ է այդ բանում Նազարեանի հիմքը, մենք դրա մասին գուցէ ուրիշ անգամ առիթ կ'ունենանք խօսելու: Հարցը մեզ համար առաջիմ դրա մասին չէ: Մենք միայն այդքանը կ'ասենք, որ այս անգամ էլ «Արձագանք» անընդունակ դրողները և եսամոլ դեկաւրները արեցին այն, ինչ որ միշտ անում են, այսինքն, հարկաւոր ժամանակը մարդուն մինչև երկինք բարձրացնել, իսկ հարկաւոր չեղած ժամանակ նոյն մարդուն ցեխոտել և անդունդ իջնցնել, նայելով թէ քամին որ կողմից է փչում... Ամօթ, հաղար ամօթ...

Եւ որպիսի ծիծաղելի տեսարան. «Արձագանք» ու՛մ օգնութեանն է դիմում իրան պաշտպանելու համար, երևակայեցէ՛ք—Նազարեանի օգնութեանը, և Նազարեանի անունով ծածկված, ու՛մ վրա է յարձակվում, դիտէ՛ք,—«Մշակի վրա...»

Օլիմպագոլիսն չէ այդ, ապա ինչ է...

ՆԱՄԱԿ ՆՈՒՄՈՒՑ

Նոյեմբերի 30-ին

Առանց բացառութիւն անելու, կարելի է աս-

տել, որ մեր քաղաքում ոչ մէկ բանի կարգ-կանոն չը կայ: Ոչ հասարակութիւնն է իւր պարտքը ճանաչում, ոչ դէպուստաբը, ոչ մէկը և ոչ միւսը... Բացառները թէ ինչպէս:

Ցախաւ ասած բանը մեր մէջ ծագաւոր և չի-նօլիւնիլ դասի համար է միայն դրած, իսկ ժողովրդի համար,—տակաւոր միայն անունը կայ, իսկ գործարարել տուող—ոչ ոք: Ապրանքի տէրը անսահման իրաւունք ունի. նրա համար տակաւ չը կայ. ո՞վ կարող է համարձակվել ասել թէ այս գինն է նշանակված և աւել իրաւունք չունեն անհետ: Այդ մի քանի բառը արտասանելու համար զլխիցը ձեռք վերցրած մարդ պէտք է լինի...

Չը նայած որ մեր քաղաքում մօտ երեսուն կառք կայ և դրանց թիւը օրից օր աւելանում է, սակայն դրանք ոչ մի կանօնի չեն ենթարկուած: Անցեալ դաւաճապետի ժամանակ, դրանց վրա պարտաւորութիւն էր դրած, որ հերթով ամենայն երեկոյ պարտաւորված 3 կառք մինչև ցերեկայ ժամի 12-ը փողոցում կամ հրապարակի վրա զը-տնվեն: Եւ այդ կարգադրութիւնը ձգուեցանք էլ կատարելու: Երբ քայքայեց նրա այտուցից հեռացած օրից՝ այդ կանօնն էլ այտուցից վերացաւ: Այն օրից անցել է աւելի քան մէկ տարի, և չը նայած որ կառքերի թիւն էլ կրկնապատկեց, այնու ամենայնիւ վերև յիշած կանօնը գոյութիւն կ'աւելի: Բաւական է փողոցում: Ինչէ, հալաւաւ ան-վարկեան, պատահմամբ գտնէ՛ք էլ նա որչա նը-շանակված գինն չէ ընդունում: Քսան կօպ, վճարելու փողարէն մէկ բուրլի կամ աւելի պէտք է վճարէ... Հալաւաւ դէպքում՝ ոտով պէտք է դնաւ: Չենք խօսում այն մասին, որ օրվայ մեծ մասը այդ կառքաներին հարձած կը տեսնէք. համարեա մարդ ակամայ է կառք նստում: Կառքի մէջ նստած էք, յանկարծ կը տեսնէք սկսեց շուռցնել և ծախ գարնելով չ'ընկալաւ: Կասէ՛ք: Ամօթից ատկոված էք լինում փողով վճարելով ինչն էլ և ոտով դնալ: Մենք մի դէպք կը պատմենք, որ մի քանի ժամանակ առաջ պատահեց, այդ կառքայանների արարքների մասին դադարաւ տալու համար:

Մինչև այժմ «աղջկայ առնանդում» այտուց պատահում էր զրիւրը. իսկ այժմ օրը ցերեկով են կատարում: Անցեալները մետաքսի դործա-րանները մէկուրեւ բանող մի 16 տարեկան թուրք աղջիկ ժամի 4-ին բանաւանդեց ատեն վե-րադառնալիս՝ իրանց տան կից փողոցում երկու թուրք շրջմոլիկներ, յարձակվելով աղջկայ վրա, չը նայած նրա դուռն-դուռնին, յափշտակում և հցում են այտուցը՝ նրանց նպատակին ծառայելու համար պատրաստ կանգնած՝ կառքի մէջ, և իրանք էլ նստելուց յետ կառքը սլանում է, տա-նելով իւր հետ վայրենի կրքի և անիրաւութեան

«անմեղ զօհին»: Ի հարկէ այդ բանը չէր կարող երկար ծածկված մնալ, քանի որ կառքայանը յայտնի էր և տեսնողներ էլ եղել էին: Բայց բա-նը նրանումն է, որ այդ նոյն կառքայանը, որը այսօր իւր կառքի վրա նստած պտտում է փողոց-ներում, անկասկած ապագայումն էլ պէտք է շա-րունակի իւր այդ տեսակ դործը, որ սովորական է համարուած այստեղ:

Առ այժմ այնքանով բաւականաւորով, մենք չենք կարող չը կրկնել, որ մեր քաղաքը, Նուխին, ներքին կողմից ոչինչ կանօնաւորութեան ենթարկ-վելու տրամադրութիւն չէ ցոյց տալիս:

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐՈՒԳԻՅ

Նոյեմբերի 26-ին

Ամենիմար վիճակի մէջ էր մայրաքաղաքիս դաղթականութեան դրութիւնը մինչև 1886 թ. երկրորդ կէտը: Գաղթականութեան հօգուտ դոր-ծերը բարձր թողի էին եղած: Եկեղեցին չունէր քա-րողիչ ու կարգադրիչ, իսկ այն դպրոցների հայ աշակերտներն ու ուսանողները, որտեղ անցնում են կրօնը,—չունէին կրօնուսույց: Բացի յաջորդից չը կար, ու դժբաղդաբար այժմ էլ չը կայ քա-հանայ, որը հոգար իւր հօտի կարիքները. Գառ-բահանայ Պատկանեան վերջին տարիներս բոլորովն դործերին չէր խառնում: Հասարակու-թիւնը արեւելավով դուրս գալ այդ դրութիւնից, միանում է մօսկովցիների հետ, խնդրամատոց լինում կաթողիկոսին՝ նշանակել մի արժանաւոր հովիւ, որը և հաստատեց հ. Խորէն Ստեփանէն:

Նրկար չը հովուեց հայր Խորէնը իրան յանձնած հօտը. նրա դործունեութիւնը տեսց միայն ութ մասի: Բայց ինչ արաւ. նա այդ կարճ ժամանա-կամիջոցում: Այստեղ հեռանալով հարցից պատ-մենք մի փոքր դէպք: 1887 թ. յուլիսին հ. Խորէնին առիթ ունեցալ տեսնելու Մօսկովայում, պատա-րագի ժամանակ: Որքան աղու էր այդ օրը նրա քարոզը, ինչպէս ամօթաւոր կանգնած էին նրա առաջ և եկեղեցու սպասաւորները և ծխա-կանները: Այդ քարոզը երեկ մինչև օրս էլ չեն մոռացել Մօսկովայի հայերը: Գալիս է Պետերբուրգ: Նոյն խորթութիւնները եկեղեցում, նոյն ան-նեղաշնակ երգեցիկ խումբը, եղած խումբն էլ վաղուց ցրված էր: Այստեղ նա անձնատուր է լինում բոլորովն իւր հօտի կարիքներին: Ձրի դասախօսում է կրօնը և հայոց լեզուն արժանի ուսումնարաններում: Գեղեցիկ ու աղու քարոզ-ները, օրինակելի կարգապատկիւնը եկեղեցու մէջ, դրանց ամբողջ հօտի համակարները: Խումբը խումբը լցնում էր հասարակութիւնը եկեղեցին. այստեղ նա լսում էր փոխանակ առաջնայ աներ-դաշնակ երգեցողութեան՝ կանօնաւոր երգեցո-

համոզմունք էր մտել:

Առաջին անգամ 1791 թւին, Կիւ քաղաքի մօտ մի գլխի ուսուցիչ, Պլիտտ անունով, նա-նախաժամած դիտաւորութեամբ, պատուաստեց կովի ծաղիկը իւր ծանօթ ֆերմերի երեք երեխա-ներին, և վերջը նա համոզվեց, որ անկան ծաղ-կի համաճարակովի ժամանակ այդ պատուաստ-ված երեխաները ազատվել էին ծաղիկից, իսկ նրանց միւս եղբայրները և քուրերը սաստիկ էին վարակվել: Այս բանը կարելի էր, ի հարկէ, իւ-րև մի պատահական դէպք ընդունել, բայց մի քանի տարի դրանից յետոյ անգլիացի բժիշկ Է-դուարդ Ջենքը բոլորովն հաստատեց կովի ծաղ-կի պատուաստման նախապաշտպանողական մեծ նշանակութիւնը: Նա փորձերից տեսաւ, որ կովի ծաղիկով պատուաստվածներին այլ ևս ընական ծաղիկով պատուաստելը չէ աջողւում:

Այսպէս, գիտնական փաստերով հաստատվե-ցաւ, որ կովի ծաղիկով պատուաստումը, կամ ինչպէս բժիշկներս անուանում ենք, վակցի-նացիան, իբրեւ նախապաշտպանողական մի-ջոց ազատում է մարդկանց ընական ծաղիկ-վարակվելուց: Հետզհետեւ վակցինացիան սկսեց տարածվել բոլոր Լուսաւորութեւ տէրութիւնների մէջ, մարդկային ծաղիկ պատուաստելը արդեւե-ցին համարեա բոլոր տէրութիւնները: Անգլիա-յում և Գերմանիայում կազմակերպվեցան ծաղ-կահատութեան ընկերութիւններ, որոնք աշխա-տում էին ծաղկահատութիւնը մոցնել ժողովրդի մէջ, և այժմ համարեա բոլոր եւրօպական պե-տութիւնները ծաղկահատութիւնը ընդունել են իբրեւ մի ստիպողական միջոց:

(Կը շարունակվի)

մենք բժիշկներս անուանում ենք, վարիօլի ա-ցիան, առաջին քայլն էր, որով մարդիկ աշխա-տում էին ծաղիկից ազատվելու: Չը նայելով վա-րիօլի ացիանի համեմատաբար լաւ հետեւանը-ներին, այդ եղանակը օրքան և իցէ չէր կարող աներկիւղ և յարմար լինել, որովհետեւ վարիօլի ա-ցիայի եղանակով պատուաստումն իւր էութեամբ բնական ծաղիկով վարակման է, որից երեւին ծաղիկի դժուարատար ձեւը առաջանալով՝ պա-տուաստաներին մահ էին պատճառում: Միւս կողմից վարիօլի ացիայի վարակված ծաղիկով հի-ւանդը շրջապատողներին համար ևս վարակիչ էր լինում, ինչպէս և բնական ծաղիկ ունեցող հիւան-դը, այնպէս որ պատուաստարանները վարակման կենտրոն էին դառնում և համաճարակումների պատճառ լինում: Պէտք է ներթափել, համաճար-գովոր Բօնի, որ միայն բնական ծաղիկ անսահման դարձուրանքը կարողանում էր մարդկութեանը ստիպել՝ այդ տեսակ երկրաշուքի միջոցը յօժարա-կամ դործ դնելու:

Թէպէտեւ առողջապահական կողմից այդ միջո-ցը ներմուծ է, բայց ինչ և իցէ բնական ծաղիկ պատուաստումը ևս իւր օգտաւէտ հետեւաններն ունեցաւ. նա պարզ կերպով ցոյց տուեց, որ եր-կրաշուքի հիւանդութիւնից նախազգուշացնելու համար կարելի է արհեստական կերպով թելել հիւանդութիւնը պատճառել: Այս հանգամանքը նպատակեց հասարակութեանը ընդունելու և ճիշդ հակամարտ պատահմամբ գտած՝ առողջապահա-կան ծաղկահատման եղանակը, որի մասին այժմ պիտի խօսենք:

Չանաղան ընտանի կենդանիները վրա երբեմն դուրս են տալիս մի տեսակ բշտիկի և բ, որոնք

ծաղիկ բշտիկները շատ նմանութիւն ունեն. ոչ խաբները, ձիերը և կովերը վարակվում են այդ տեսակ ծաղիկով: Ոչխարի ծաղիկը (ovinnola) մարդ-կային ծաղիկին շատ նման է, նա նմանապէս սկսվում է տաքութեան ընդհանուր երևոյթնե-րով, ամբողջ կաշու վրա բշտիկներ են դուրս տա-լիս, օղի միջոցով առողջ կենդանիներին է փոխ-վում և հօտերին բաւական մեծ վնասներ է աա-լիս:

Կ ո Վ ի ծ ա ղ ի կ (vaccinola) ամենաթելե ըն-թացք ունի. բշտիկները երևում են միայն ծծերի վրա, գլխաւորապէս պտու կն երկ վրա, վարակ-վել հիւթը օղի միջոցով չէ տարածվում և դառն-վում է միայն բշտիկների բաղադրութեան—աւելի մէջ: Ծաղիկով վարակված կովերի ընդհանուր դը-րութիւնը բաւական լաւ է լինում և հիւանդու-թիւնը անցնում է առանց մի որ և է վնասակար երևոյթների:

Կենդանական ծաղիկ բշտիկների աւելը (հիւ-թը), ինչպէս և մարդու ծաղիկ հիւթը կարելի է պատուաստել ոչ թէ միայն մի և նոյն տեսակի կենդանիներին, այլ և ուրիշ կենդանիներին, օրե-նակ, կապկին, մարդուն, ուղտին, էշին, խոզին, այծին, կատուն, շանը և ձագարին:

Մարդու ծաղիկ բշտիկներին հիւթը ոչ թէ մի-այն կարելի է կենդանիներին պատուաստել, այլ և նշանաւոր է այն փաստը, որ կենդանիներին մարդու ծաղիկ պատուաստելն այն ձեւի ծաղիկ է առաջացնում, որ ձեւն էլ որ յատուկ է ծաղիկ հիւթի տուող կենդանուն, օրինակ կովի ծծի վրա մարդու ծաղիկ պատուաստելը ընդհանուր հի-ւանդութիւն կովին չէ պատճառում, կովը չէ ջնքում, ծաղիկը դուրս չէ տալիս կովի ամբողջ կաշու վրա, այլ ծաղիկ բշտիկները միւսում են մի-

այն ծծի վրա, այն էլ պատուաստած տեղերում, մի խօսքով կովին յատուկ ծաղիկ ձեւ է առաջա-նում: Բացի դրանից եթէ այդ կովի բշտիկների բաղադրութիւնը մարդուն պատուաստելը, մենք մի և նոյն հետեւանները կը ստանանք, ինչպէս և կովի ծաղիկ պատուաստելուց յետոյ: Մի և նոյն երևոյթներն ենք տեսնում, եթէ կովերին ոչխարի ծաղիկ պատուաստենք: Սրանից երևում է, որ կենդանիները կազմուածք մի առանձին յատկու-թիւն ունի մարդու ծաղիկ թիւնը բաւականապի-թուլացնելու: Անշաւաւ կերպով այս երևոյթին նայելով, պիտի ընդունենք, որ մարդկային և կենդանական ծաղիկը միմեանից շատ նման են, մինչև անգամ մի քանի բժիշկ մասնագէտներ կարծիք յայտնեցին և բաւական հիմնաւոր, թէ ծաղիկ բոլոր ձեւերը մի և նոյն հիւանդաւ ծի-նակիցն ունեն:

Առաջ ևս յայտնի էր, որ պատահմամբ կովի ծաղիկով վարակված մարդիկ ընական ծաղիկ էլ չէին հիւանդանում, մինչև անգամ ազատվում էին ծաղիկի սաստիկ համաճարակումների ժամա-նակ ևս:

Խաչարարանները, նախապաշտպանները, երբ վերջոս ձեռքերով բռնում էին կովի ծաղիկոտ ծծերը, կիթե-լու համար, այդ դէպքում ծաղիկը կաշու էր և մի քանի օրից յետոյ ձեռքերի վրա ծաղիկ բշտիկ-ներ էին առաջանում: Հետզհետեւ փորձերից երևաց որ ձեռքերը վրա կովի ծաղիկ ունեցող մարդիկ այլ ևս ընական մարդկային ծաղիկ չէին վա-րակվում, չը նայելով որ երկար ժամանակ ծաղ-կով վարակված հիւանդները մասին էին հոգում, կամ մօտիկ յարաբերութիւն էին ունենում նրանց հետ: Այսպէս ժողովրդի մէջ, կովի ծաղիկի նա-խապաշտպանողական դրութեան մասին մեծ

გაბრეგინ ჯიბრეგინ და ანდრეასიანობის წამის-
მართლის რწმუნებულობის წამის და
გაბრეგინ ჯიბრეგინ და ანდრეასიანობის წამის-
მართლის რწმუნებულობის წამის და

გაბრეგინ ჯიბრეგინ და ანდრეასიანობის წამის-
მართლის რწმუნებულობის წამის და
გაბრეგინ ჯიბრეგინ და ანდრეასიანობის წამის-
მართლის რწმუნებულობის წამის და

გაბრეგინ ჯიბრეგინ და ანდრეასიანობის წამის-
მართლის რწმუნებულობის წამის და
გაბრეგინ ჯიბრეგინ და ანდრეასიანობის წამის-
მართლის რწმუნებულობის წამის და

გაბრეგინ ჯიბრეგინ და ანდრეასიანობის წამის-
მართლის რწმუნებულობის წამის და
გაბრეგინ ჯიბრეგინ და ანდრეასიანობის წამის-
მართლის რწმუნებულობის წამის და

საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა

საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

—	—	2-რე	—	97	>	75	>
—	—	3-რე	—	97	>	37	>
საქმის განხილვა	50/0	საქმის განხილვა	ფინანსების	272	>	—	>
—	—	—	—	243	>	50	>
საქმის განხილვა	51/20/0	საქმის განხილვა	—	101	>	75	>
—	—	—	—	177	>	—	>
საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	150	>	—	>
—	—	—	—	97	>	75	>
საქმის განხილვა	50/0	საქმის განხილვა	საქმის განხილვა	142	>	50	>
—	—	—	—	91	>	37	>
საქმის განხილვა	51/20/0	საქმის განხილვა	საქმის განხილვა	97	>	87	>
—	—	—	—	97	>	62	>
საქმის განხილვა	60/0	საქმის განხილვა	საქმის განხილვა	97	>	75	>
—	—	—	—	100	>	50	>
—	—	—	—	99	>	75	>
—	—	—	—	100	>	50	>

—	—	საქმის განხილვა	—	101	>	—	>
—	—	საქმის განხილვა	—	99	>	75	>
—	—	საქმის განხილვა	—	100	>	—	>
—	—	საქმის განხილვა	—	99	>	25	>
—	—	საქმის განხილვა	—	72	>	—	>
—	—	საქმის განხილვა	—	—	>	—	>
საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	684	>	—	>
—	—	—	—	241	>	—	>
საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	83	>	50	>
—	—	—	—	91	>	25	>
საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	91	>	75	>
—	—	—	—	92	>	75	>
საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	საქმის განხილვა	—	>	—	>
—	—	—	—	—	>	—	>

საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა



ОПТИЧЕСКОЕ ОТДѢЛЕНИЕ
ВЪ МАГАЗИНѢ ЧАСОВЪ
М. Г. ЦЕЙТЛИНА
ПРОТИВЪ ДВОРЦОВАГО САДА, УГЛОВОЙ МАГАЗИНЪ.
ВСЕВОЗМОЖНЫЕ ОЧКИ, ПЕНСЕН, ЛОРНЕТЫ И ТЕРМОМЕТРЫ.
отпускаются въ точности по рецептамъ г.г. врачей, по новой метрической и прежней дюй-
мовой системѣ. Починки и вставки стеколъ.
ЦѢНЫ САМЫЯ УМѢРЕННЫЯ.
1—6 (2)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა

САРПИНКА. | Приемъ заказовъ и пересылка во все города Россіи и за-границу. | СЕЗОНЪ 1889 Г.
СОБСТВЕННОЙ ВЫРАБОТКИ САРПИНСКІЯ ИЗДѢЛІИ РУЧНОГО ТКАЧЕСТВА
родъ зефира, для дѣла на дамскія платья, дѣтскіе костюмы и мужскія сорочки.
Отлично моются.
Цѣны отъ 15 до 22 копѣекъ за аршинъ.
ОГРОМНАЯ КОЛЛЕКЦІЯ НОВѢЙШИХЪ ОБРАЗЦОВЪ
высылаются заказнымъ бандеролю въ альбомѣ за 42 и въ конвертѣ за 28 копѣекъ
почтовыми марками. Цѣны и условія при образцахъ.
Адресъ: Саратовъ. Товарищество промышленниковъ сарпинскихъ издѣлій.
СЕЗОНЪ 1889 Г. | ПРОДАЖА ШТУКАМИ и АРШИНАМИ. | САРПИНКА.
2—5 (10 и 25)

საქმის განხილვა
საქმის განხილვა

საქმის განხილვა
საქმის განხილვა